**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**

**26.02.2026 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/21-2 գնման պայմանագրի**

ք. Երևան «27» «05» 2026 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԿՈՄՈՒՆԱԼ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև կողմեր), ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով 26.02.2026 թվականին կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/21-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.14 կետերը, ինչպես նաև ***Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության*** կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1.*Համաձայնագրի առարկան***

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

*1.1* Պայմանագրի՝ **Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Աղայան փողոցի հ.13 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների** դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել *25 389 570 (քսանհինգ միլիոն երեք հարյուր ութսունինը հազար հինգ հարյուր յոթանասուն)* ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Պայմանագրի գնի մնացած 24 810 450 (քսանչորս միլիոն ութ հարյուր տասը հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, գումարի մասով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

1.3 Հաստատել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված թիվ 1-ի:

1.4 Հաստատել սույն համաձայնագրի կատարվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկը՝ համաձայն հավելված թիվ 2-ի:

***2. Այլ պայմաններ***

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է ***3*** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՊԱԼԱՌՈՒ** |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ԿՈՄՈՒՆԱԼ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | ք. Երևան, Նոր Նորքի 6-րդ, |
| ՀՀ ֆինանսների նախարարության | Շոպրոնի 20/8 տուն |
| գործառնական վարչություն | «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011057982 | Հ/Հ 163038040297 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 07623373 |
| Վ.Պապիկյան ______________ | Ա. Խաչատրյան ______________ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված թիվ 1
26.02.2026թ. կնքված թիվ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/21-2 պայմանագրի
« 27 » « 05 » 2026 թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքների | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 6 | 45231143/36 | Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Աղայան փողոցի h.13 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ | ... | ... | ... | ... | 15060000 | 15060000 | 25389570 | 25389570 | 25389570 | 25389570 | 25389570 | 25389570 | **25389570** |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011057982
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան ---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«ԿՈՄՈՒՆԱԼ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորքի 6-րդ,
Շոպրոնի 20/8 տուն
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 163038040297
ՀՎՀՀ 07623373

Ա. Խաչատրյան ---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
26.02.2026թ. կնքված թիվ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/21-2 պայմանագրի
« 27 » « 05 » 2026 թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.13 ՀԱՍՑԵԻ ԿՈՅՈՒՂԱԳԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| ՀՀ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 6 | Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Աղայան փողոցի հ.13 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ | Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները սկսվում են՝ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից | մինչև 50-րդ օրացուցային օրը |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011057982
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ____________________
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«ԿՈՄՈՒՆԱԼ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորքի 6-րդ,
Շոպրոնի 20/8 տուն
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 163038040297
ՀՎՀՀ 07623373

Ա. Խաչատրյան ____________________
(ստորագրություն)
Կ.Տ

ARMECONOMBANK
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
«ՄՅԱՍՆԻԿՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
0025, ք. Երևան, Իսահակյան12
Tel., +374 10 510 910 *0301#
Տեղեկատու՝ 86-86; +374 10 510 910
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
MYASNIKYAN BRANCH
Isahakyan 12,0025 Yerevan,
Tel., +374 10 510 910 *0301#
Call Center: 86-86; +374 10 510 910
www.aeb.am

**16303/37-557** **26/05/2026թ**

**ԵՐԱՇԽԻՔ Ե-03/26/0006**
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Երևանի քաղաքապետարանի** (այսուհետ՝ բենեֆիցիար) և **«ԿՈՄՈՒՆԱԼ ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության** (այսուհետ՝ պրինցիպալ) միջև 26.02.2026 թ.-ին **կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/21-2 պայմանագրին կից կնքվելիք Համաձայնագիր N 1**-ից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:
2. Երաշխիքով **«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **2,769,800 (երկու միլիոն յոթ հարյուր վաթսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900015211429** հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրիցնիպալի միջև 26.02.2026 թ.-ին **կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/21-2 պայմանագրին կից կնքվելիք Համաձայնագիր N 1**-ն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը՝ **մինչև 28.02.2028թ. ներառյալ**: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ sergey.simonyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
1) N **ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/21-2** պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**«ՄՅԱՍՆԻԿՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ կառավարիչ՝ Դ. Եսայան**

**«ՄՅԱՍՆԻԿՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ Սպասարկման բաժնի պետ՝ Ա. Մաիլյան**

ARMECONOMBANK
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
«ՄՅԱՍՆԻԿՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
0025, ք. Երևան, Իսահակյան12
Tel., +374 10 510 910 *0301#
Տեղեկատու՝ 86-86; +374 10 510 910
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
MYASNIKYAN BRANCH
Isahakyan 12,0025 Yerevan,
Tel., +374 10 510 910 *0301#
Call Center: 86-86; +374 10 510 910
www.aeb.am

**16303/37-558** **26/05/2026թ**

**ԵՐԱՇԽԻՔ Ե-03/26/0005**
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Երևանի քաղաքապետարանի** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/21** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում **«ԿՈՄՈՒՆԱԼ ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության** (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից 26.02.2026 թ.-ին **կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/21-2 պայմանագրին կից կնքվելիք Համաձայնագիր N 1-ով** նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):
2. Երաշխիքով **«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **4,154,700 (չորս միլիոն մեկ հարյուր հիսունչորս հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:
**Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:**
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև 26.02.2026 թ.-ին **կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/21-2** պայմանագրին կից կնքվելիք **Համաձայնագիր N 1-ն** ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը՝ **մինչև 28.02.2027թ. ներառյալ**: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ sergey.simonyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) N **ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/21-2** ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.
   3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
   1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
   2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**«ՄՅԱՍՆԻԿՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ կառավարիչ՝ Գ. Եսայան**

**«ՄՅԱՍՆԻԿՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ Սպասարկման բաժնի պետ՝ Ա. Մաիլյան**